

ներ ստանալու: «Էհտզհեաէ առաջ են գալիս նրան թշնամիները դրած յօդուածների պատճառով» և այլն: Այս ոճերը թարգմանութեան նշաններ են երևում...: Այսչափը բաւական է:

2. Լ. ՏՕԼՍՈՅ. մարդու շատ հող է հարկաւոր. ուռւ. թարգ. Վրթանէս քահանայ Մովսիսեան. Արտատպած Արարատից: էջ 31.

Ռուս տաղանդաւոր փիլիսոփայ-վիպագրի այս փոքրիկ, բայց բովանդակալի գրուածքը ընթերցանութեան գեղեցիկ նիւթ է պարունակում. հողից զուրկ ուռւ գիւղացին բնականաբար ձգտում է շատ հող ունենալու, բայց պախովը այդ ձգտումը չափազանցութեան հասցնելով այնքան ազահանում է, որ էժան գնով շատ ու շատ հող ձեռք բերելու համար ամբողջ օրը վազելով շնչասպառ է լինում և միմիայն երեք արշին հողի մէջ թաղւում: Թարգմանուած է բաւականին սահուն լեզուով բայց գաւառաբանութիւններ ունի. օրինակ. «կնանիքը» (կանայք) «գովալու» (գովիւլ), «..կը տեսնենք ո՛րս կը տանի» (մեզնից ո՞վ կտանի) «ծախեց անասնեղէնները» (անասունները) և այլն: Արժէ կարգաւ:

3. ԶԵՐՈՄ ԶԵՐՈՄԻ. Նոր ցնորք. պատմուածք: Ազատ թարգմ. ուռւ. Գ. Մ Մահնազարեանց, էջ. 30:

Մարդկանց հաւասարութեան գաղափարը միշտ ունեցել է իւր պաշտպաններն ու հակառակորդները. այս գաղափարով զբաղուել են թէ փիլիսոփաները, թէ քաղաքագէտները և թէ տնտեսագէտները: Հաւասարութեան գաղափարը նոր չէ. նոյնիսկ նախաքրիստոնէական պատմական շրջաններում արծարծուել է, մինչև այսօր էլ արծարծուել է և ապագայում ևս դեռ երկար ժամանակ կարծարծուի: Մարդկային քաղաքակրթութեան հետ այս գաղափարն ևս հետզհետէ պարզւում, ուսումնասիրւում, մասամբ գործադրութեան մօտենում է. այս գաղափարի մի մասը, այն է մարդկային իրաւունքների հաւասարութիւնը վաղուց արդէն շատ պետական օրէնադրութիւնների հիմքն է կազմում: Հաւասարութեան գաղափարի ամենազօռուար իրագործելի մասը նիւթական զոյքի սեպականութեան, ախատանքի հաւասարութեան և դրանից առաջացած հետևանքների



խնդիրն է, որ եռանդով քարոզում են գաղափարական սօցիալիստները և դրա անկարելիութիւնը ծաղրի ու հեզնութեան են ենթարկում դրանց հակառակորդները:

Գրքոյկիս հեղինակը վերջինների շարքին է պատկանում և սուր երգիծարանութեան ենթարկում հաւասարութեան գաղափարի ծայրահեղութիւնները: XIX-րդ դարու մարդը քնից զարթում է XXIX-րդ դարում և մարդկանց հաւասարութեան գաղափարն իրագործուած տեսնում. բոլոր մարդիկ միմեանց նման են՝ «ածելուած, սեահեր»։ «մենք բոլորս սե մազեր ենք կրում, իսկ եթէ մէկը ի բնէ այլ գոյնի մազեր ունի, մենք ներկում ենք.. միթէ հաւասարութիւն կը լինի, եթէ մի խումբ թեթև սովիկ պարոններ ու պարոնուհիներ ունենան խոպոպիկ մազեր, իսկ այլք լինէին «քայալ»։ Լաւ ածելելով բոլոր մարդկանց, և հրամայելով, որ երկար մազեր պահեն, մենք բնութեան սխալը մասամբ շտկում ենք»։ Կանայք և տղամարդիկ միմեանցից տարբերում են միայն նրանով, որ կանայք մէջքի վրայ գոյգ թիւ են կրում, իսկ տղամարդիկ՝ կէնա, որովհետև անուն և ազգանուն կրելը «մի զարհուրելի անհաւասարութիւն էր»։ «Մարդիկ համոզուեցին, որ եթէ իւրաքանչիւրը իր կամքով լուացուի, ընդհանուր հաւասարութիւնը կխախտուի, որովհետև կան մարդիկ, որոնք օրական 4-5 անգամ են լուացւում, իսկ այլք միայն մէկ անգամ»։ Հաւասարութեան տեսակէտից ընտանիքն էլ ջնջւում է— «ծնելու արհեստն էլ մենք շատ լաւ հիմքերի վրայ ենք դրել մօտաւորապէս այնպէս, ինչպէս ձեր օրերում բազմացնում էին կովերն ու ձիերը: Գարնանը, համաձայն կայսերական բարձրագոյն հրամանի, պատրաստում են որոշ թիւ փոքրիկները...»: Այս եղանակով է երգիծաբանում հեղինակը հաւասարութեան գաղափարի ծայրահեղութիւնները նոյնպէս և ձայն բազմացր. «միթէ փոքրամասնութիւնը իւր գլխի, ոտքի կամ ձեռքի տէրը չէ, և ոչ մի իրաւունք չունի:—Փոքրամասնութիւնը ո՛չ մի իրաւունք չունի »: Հեղինակի կարծիքով այսպիսի հաւասարութիւնը մարդկանց կատարեալ անասուններ կղարձնի. «դոքա (մարդիկ) նոյն դէմքերն էին, որպիսիք ունէին ձիերն և կովերն «անդր բարենորոգեալ» այնպէս»:

Թարգմանութեան լեզուն պարզ ու սահուն է. երբեմն միայն պատահում են անճիշտ ոճեր, ինչպէս օրինակ. «ինքս ինձ եմ արթնանում», դերանունների կրկնութիւններ շատ կան: Գրքոյկը հետաքրքրութեամբ է կարդացւում: